Կարգապահական գործ թիվ ԿԳ-25091

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱԿՈԲ ՌՈԲԵՐՏԻ ՃԱՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Կարեն Հովհաննիսյանի և փաստաբան Հակոբ Ճորոյանի,

քննության առնելով փաստաբան Հակոբ Ռոբերտի Ճարոյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1474), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Փաստաբան Կարեն Հովհաննիսյանը **(այսուհետ՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ),** հայտնել է, որ հանդիսացել է թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչը: Նշված գործով 30.06.2025թ. դատարանի վճռով Դիմողի ներկայացրած հայցը բավարարվել է:

Դիմողը հայտնել է, որ հակառակ կողմի փաստաբան Հակոբ Ճարոյանը 08.10.2025թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրել է վերաքննիչ բողոք, որի կապակցությամբ Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Ըստ Դիմողի՝ ի պատասխան առարկությունների, հակառակ կողմի փաստաբան Հակոբ Ճարոյանը ներկայացրել է «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթուղթ, որտեղ բազմաթիվ վիրավորական արտահայտություններ են կատարվել Դիմողի վերաբերյալ, մասնավորապես.

Թիվ ԿԳ-25091-2-Ա
18.02.2026թ.

1. «Հայցվորի ներկայացուցիչը ստում է, որ Պատասխանողն է Հայցվորին հորդորել դիմել դատարան. Դատարան դիմելը Հայցվորի ներկայացուցչի մոտ բնավորություն է, որի հիմնավորումը հետևյալն է...:

2. Գուցե «համարձակ իրեն հայտնի ճշմարիտ տեղեկություններ հայտնող, գիտելիքներ, փորձառություն և պրոֆեսիոնալիզմ» ունեցող Հայցվորի ներկայացուցիչը կանդրադառնա վերաքննիչ բողոքին նաև բովանդակային առումով, հակառակ դեպքում ես ինձ իրավունք եմ վերապահում եզրահանգելու, որ հայցվորի ներկայացուցիչը «մեծամիտ» և «փուչ» անձնավորություն է, ով իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ գռեհիկ արտահայտություններ կատարելու միջոցով:»:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Հակոբ Ճարոյանին ենթարկել պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 27.11.2025թ. Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ լրացուցիչ ապացույց կամ բացատրություն չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն:

Ի պատասխան 29.10.2025թ. հասցեագրված գրության՝ Փաստաբանը ներկայացրել է թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով իր կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը և Դիմողի վերաքննիչ բողոքի պատասխանը, որը հիմք է հանդիսացել Փաստաբանի կողմից դիրքորոշումը գրելու համար:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 27.11.2025թ. Փաստաբանին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որին ի պատասխան 12.12.2025թ. Փաստաբանի կողմից ներկայացվել է բացատրություն և համառոտագիր:

Փաստաբանը 09.02.2026թ., 10.02.2026թ., 11.02.2026թ. և 18.02.2026թ., բացատրություններ է ներկայացրել, որոնց ընդհանուր տրամաբանությունից ակնհայտ է դառնում, որ Փաստաբանն իր կողմից դատարան ներկայացված դիրքորոշման մեջ օգտագործած ձևակերումներն առավելապես կապում է Դիմողի վերաքննիչ բողոքի պատասխանում արտահայտած կարծիքների հետ: Այսինքն, Փաստաբանի պնդմամբ, իր վարքագծի դրսևորումը պայմանավորված է եղել Դիմողի «սադրիչ» վարքագծով:

Փաստաբանը, թե՛ բացատրությունների մեջ «Հիմնավորումներ» վերտառությամբ բաժնում և թե՛ կարգապահական նիստի ընթացքում անդրադարձել է իր կատարած

ձևակերպումների ստուգաբանություններին և բացատրություններին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>.

Պալատի նախագահի 13.11.2025թ. թիվ 325-Ա/ԿԳ-25091 որոշմամբ փաստաբան Հակոբ Ճարոյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 4.1-րդ ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

19.11.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Շուշան Հարությունյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 19.01.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 18.02.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով հանդիսանում է պատասխանողի ներկայացուցիչ, իսկ Դիմողը՝ հայցվորի: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված փաստաթղթերով:*

2. «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթղթում Հակոբ Ճարոյանի կողմից կատարվել են հետևյալ արտահայտությունները.

- «Հայցվորի ներկայացուցիչը ստում է, որ Պատասխանողն է Հայցվորին հորդորել դիմել դատարան. Դատարան դիմելը Հայցվորի ներկայացուցչի մոտ բնավորություն է, որի հիմնավորումը հետևյալն է...:

- Գուցե «համարձակ իրեն հայտնի ճշմարիտ տեղեկություններ հայտնող, գիտելիքներ,

փորձառություն և պրոֆեսիոնալիզմ» ունեցող Հայցվորի ներկայացուցիչը կանդրադառնա վերաքննիչ բողոքին նաև բովանդակային առումով, հակառակ դեպքում ես ինձ իրավունք եմ վերապահում եզրահանգելու, որ հայցվորի ներկայացուցիչը «մեծամիտ» և «փուչ» անձնավորություն է, ով իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ գռեհիկ արտահայտություններ կատարելու միջոցով:»: Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված՝ Փաստաբանի կողմից կազմված «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթղթով:

6. **<u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հակոբ Ճարոյանը փաստաբան է հանդիսանում 25.06.2012 թվականից և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. **<u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Հակոբ Ճարոյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 ենթակետի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական*

պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, փաստաբան Հակոբ Ճարոյանին վերագրում է վարվելակերպի կանոնների խախտման վարքագիծը:

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները մեջբերված նորմերի ու հիմնավորումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը հանդիսացել է քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչը, իսկ փաստաբան Հակոբ Ճարոյանը՝ նույն գործով պատասխանողի ներկայացուցիչը: Իր վստահորդի իրավունքները պաշտպանելիս, Փաստաբանը ի պատասխան Դիմողի առարկությունների ներկայացրել է «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթուղթ, որում թույլ է տվել մի շարք արտահայտություններ:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն անդրադառնալով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի պահանջների խախտմանը, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 4.1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:*

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ այդ թվում դատարանների և այլ մարմինների առջև, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգանքով վերաբերվի այն մարմիններին և դատավարության մյուս մասնակիցներին, որոնց հետ նա առնչվում է, պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 16 (2013) կարծիքի 25-րդ կետի համաձայն՝ ... *Պրոֆեսիոնալ գործընկերների նկատմամբ հարգանքի, օրենքի գերակայության և արդարադատության արդար իրականացման հարգանքի՝ Փաստաբանների և իրավաբանների միությունների եվրոպական խորհրդի «Եվրոպայում իրավաբանի մասնագիտության հիմնարար սկզբունքների մասին» խարտիայում սահմանված սկզբունքներով պահանջվում է խուսափել գործընկերների, առանձին դատավորների և դատարանի ընթացակարգերի ու որոշումների վիրավորական քննադատությունից:*

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին, Հանձնաժողովն արձանագրում է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը հանդիսացել է թիվ ԵԴ2/7026/02/24 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցիչը, իսկ փաստաբան Հակոբ Ճարոյանը՝ նույն գործով պատասխանողի ներկայացուցիչը: Դիտված գործով 30.06.2025թ. դատարանի վճռով Դիմողի ներկայացված հայցը բավարարվել է: Փաստաբան Հակոբ Ճարոյանը 08.10.2025թ. էլեկտրոնային եղանակով ներկայացրել է

վերաքննիչ բողոք, որի կապակցությամբ Դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոքի պատասխան:

Ի պատասխան Դիմողի առարկությունների, հակառակ կողմի փաստաբան Հակոբ Ճարոյանը 13.10.2025թ. ներկայացրել է «Դիրքորոշում» վերտառությամբ փաստաթուղթ, որտեղ կատարել է հետևյալ արտահայտությունները.

1. *«Հայցվորի ներկայացուցիչը ստում է, որ Պատասխանողն է Հայցվորին հորդորել դիմել դատարան. Դատարան դիմելը Հայցվորի ներկայացուցչի մոտ բնավորություն է, որի հիմնավորումը հետևյալն է...*

2. *Գուցե «համարձակ իրեն հայտնի ճշմարիտ տեղեկություններ հայտնող, գիտելիքներ, փորձառություն և պրոֆեսիոնալիզմ» ունեցող Հայցվորի ներկայացուցիչը կանդրադառնա վերաքննիչ բողոքին նաև բովանդակային առումով, հակառակ դեպքում ես ինձ իրավունք եմ վերապահում եզրահանգելու, որ հայցվորի ներկայացուցիչը «մեծամիտ» և «փուչ» անձնավորություն է, ով իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ գռեհիկ արտահայտություններ կատարելու միջոցով:*

Հարկ է նշել, որ Փաստաբանը թե՛ ներկայացրած բացատրություններով, թե՛ կարգապահական նիստի ընթացքում արտահայտված դիրքորոշումներով ընդունել է այն հանգամանքը, որ դիրքորոշման ձևակերպումները կատարվել են իր կողմից և ուղղված են եղել Դիմողին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի դատավարական փաստաթղթերը պետք է կազմվեն իրավական լեզվով և զերծ լինեն վիրավորական ձևակերպումներից: Փաստաբանի մասնագիտական գործունեության շրջանակում ապահովվում է խոսքի ազատությունը և իրավական դիրքորոշման ազատ արտահայտման իրավունքը, սակայն այդ իրավունքը սահմանափակվում է փաստաբանի վարքագծի կանոններով, որոնք պարտադրում են դրսևորել կոռեկտություն, զսպվածություն և փոխադարձ հարգանք գործընկերների նկատմամբ:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանի 13.10.2025թ. դատարան ներկայացրած դիրքորոշմամբ, մասնավորապես՝ դրանում օգտագործված *«հայցվորի ներկայացուցիչը մեծամիտ և փուչ անձնավորություն է», «իր անգրագիտությունը փորձում է թաքցնել Պատասխանի մեջ»* արտահայտություններով Դիմողի նկատմամբ դրսևորել է անհարգալից վարքագիծ:

Դատարան ներկայացված փաստաթղթում օգտագործված ձևակերպումները, որոնցում հակառակ կողմի ներկայացուցիչը բնութագրվել է որպես *«մեծամիտ և փուչ անձնավորություն»* և նրան վերագրվել է *«անգրագիտություն»*, իրենց էությամբ անձնական բնույթի գնահատականներ են: Դրանք չեն հանդիսանում իրավական փաստարկ և չեն նպաստում գործի հանգամանքների պարզաբանմանը: Ընդհակառակը՝ նման արտահայտությունները դուրս են մասնագիտական բանավեճի թույլատրելի սահմաններից և ուղղված են անձի արժանապատվության նսեմացմանը: Մասնավորապես, «ստում է» ձևակերպումը, երբ չի ներկայացվում գիտակցաբար կեղծ տեղեկություն հաղորդելու բավարար հիմնավորում, դուրս

է պրոֆեսիոնալ բանավեճի սահմաններից, «մեծամիտ», «փուչ անձնավորություն», «անգրագիտությունը փորձում է թաքցնել» ձևակերպումները վերաբերում են ոչ թե փաստարկներին, այլ անձին, հետևաբար դրանք չեն կարող դիտվել որպես դատավարական պաշտպանության ընդունելի միջոց:

Տվյալ դեպքում, Փաստաբանը ոչ թե փորձել է իրավական ճանապարհով հերքել վերաքննիչ բողոքի պատասխանում արտացոլված փաստարկները, մատնանշել դրանց հակասականությունը, անհիմն լինելը կամ իրավական սխալ կիրառումը, այլ իր դիրքորոշումը կառուցել է հակառակ կողմի ներկայացուցչի անձնական հատկանիշների գնահատման վրա: Այս վարքագիծը վկայում է, որ փաստաբանը շեղվել է իրավական բանավեճի առարկայից և անցել է անձնական վիրավորանքների դաշտ, ինչը հակասում է մասնագիտական կոռեկտության և փոխադարձ հարգանքի սկզբունքին:

Մասնագիտական էթիկայի տեսանկյունից քննադատությունը պետք է ուղղված լինի բացառապես փաստարկների բովանդակությանը և իրավական հիմնավորումներին: Անձի բնութագրման միջոցով փաստարկի արժեզրկումը անթույլատրելի է, քանի որ այն չի ծառայում արդարադատության իրականացման նպատակին և խաթարում է փաստաբանի մասնագիտական վարքագծի նկատմամբ հանրային վստահությունը:

Ինչ վերաբերում է Փաստաբանի պնդումների առ այն, որ Դիմողի ներկայացրած վերաքննիչ բողոքի պատասխանն է ըստ էության հիմք հանդիսացել իր կողմից նման կոշտ ձևակերումներով դիրքորոշում ներկայացնելուն, հարկ է նշել, որ նույնիսկ եթե հակառակ կողմի ներկայացուցչի դիրքորոշումը եղել է անտեղի կամ ոչ կոռեկտ, այդ հանգամանքը Փաստաբանին չի ազատում սեփական մասնագիտական վարքագծի կանոնները պահպանելու պարտականությունից: Փաստաբանի պատշաճ արձագանքը պետք է դրսևորվի իրավական հակափաստարկներով կամ օրենքով նախատեսված այլ դատավարական միջոցներով, այլ ոչ անձնական վիրավորանքներով:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 4.1 ենթակետի խախտման պահանջների խախտման հատկանիշները:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին

հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ Փաստաբանը դատարան ներկայացրած «Դիրքորոշում» վերտառությամբ դատավարական փաստաթղթում օգտագործած ձևակերպումները դուրս են մասնագիտական բանավեճի թույլատրելի սահմաններից և ուղղված են գործընկեր հանդիսացող անձի արժանապատվության նսեմացմանը: Ընդ որում, Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում և բացատրություններով ընդունում է այն հանգամանքը, որ կոշտ ձևակերպումները կատարվել են իր կողմից և ուղղված են եղել Դիմողին:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով՝ խաթարել է փաստաբանի մասնագիտական վարքագծի նկատմամբ հանրային վստահությունը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայության փաստն, ինչպես նաև Փաստաբանի բացատրությունները, որոնցից չի կիրառում ավելի խիստ տույժի տեսակ, որը ելնելով սույն գործով Փաստաբանին վերագրվող վարքագծի և հաստատված փաստերի համատեքստում, կարող էր կիրառվել ավելի խիստ տույժի տեսակ:

Ըստ այդմ, Հանձնաժողովը, հաշվի առնելով կարգապահական պատասխանատվության ուղղիչ և կանխարգելիչ նշանակությունը, գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի նկատմամբ պետք է կիրառվի կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակների կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով

հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Հակոբ Ռոբերտի Ճարոյանի (արտոնագիր՝ թիվ 1474) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25091-2-Ա
18 փետրվարի 2026թ.
ք.Երևան